

ՎԱՐԱԳ ՆԵՐՍԻ ՍՅԱՆ
Քանասիրական գիտությունների թեկնածու

ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆԻ» ՔՆԱՐԱԿԱՆ ՀԵՐՈԸԸ

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը քնարական ստեղծագործություն է: Խճմին համապատասխան է, որ մարդկային հովզերի, ներաշխարհի, զգացմունքային զանազան երևույթների գեղարվեստական արտացոլումը ենթադրում է քնարական որոշակի բնակության առկայություն:

Մատյանի մեջ պատկերված ապրումները՝ հոգեկան տենչանքները, տագնապներն ու տառապանքները, գրեթե ամենուր դրսերպում են զգացող անհատականության «ես»-ի միջոցով: «Մենք»-ը Նարեկացու երկում հանդիպում է շատ հազվադեպ, այն էլ համարյա միշտ «ես»-ին զուգադիր: Այս «մենք»-ի գործածության օրինակներից մեկը, որ անմիջապես հաջորդում է «ես»-ին.

*Ես ես վկայեմ իմովս բամի,
Քանզի իրը զանզայ պաճարս անասնոց՝
Մեռանիմք, եւ ո՛չ զարհուրիմք...
Տարագրիմք, եւ ո՛չ տագնապիմք,
Եղծանիմք, եւ ո՛չ զդշանամք,
Մաշիմք, եւ ո՛չ մտառնմք...*

(ԾԵ, 50-52, 55-57: Տե՛ս Աան ԻԸ, 59, 110, 112; ԻԹ, 108)¹

Արդ, հարց է ծագում ո՞վ է Մատյանում հանդես եկող «ես»-ը: Արդյոք ցավագին ու հոգեմաշ տառապանքներ ապրող այդ «ես»-ը սուկ միջոց ու նպատակ է ծամանակի ընդհանրացված մարդուն կերպավորելու համար, ինչպես հաստատում են որոշ գրականագետներ, իսկ ավելի որոշակիորեն և հստակ՝ Գրիգոր Նարեկացուն նվիրված մեծարժեք հետազոտության հեղինակ բարեհիշտառակ Արշալուս Ղազինյանը, գրելով, թե «Նարեկացու քնարական հերոսը դեռևս անձնաւորութիւն չէ, այլ ընդհանրացուած անհատ, հաւաքական կերպար, վերացարկուած մարդկային էութիւն»²:

Բայց ակնհայտ փաստ է, որ Մատյանի բազմաթիվ էջերում երևան եկող «ես»-ը շատ դեպքերում հնաց որոշակիորեն վերաբերում է միայն տվյալ ստեղծագործության հեղինա-

¹ Քաղաքածքները բերում ենք ըստ Մատյանի գիտաբանական հրատարակությամ տե՛ս «Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան: Աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985»: Փակագծերի մեջ նշվում է ստեղծագործության համապատասխան գրումը, իսկ թվանշաններով՝ տողերը:

² Արշալուս Ղազինյան, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեատը, Բեյրութ, Աթելիիաս, 1995, էջ 132-133:

կի անձին և քնավ չի համատեղվում «ընդհանրացուած անհատ, հաւաքական կերպար, վերացարկուած մարդկային էութիւն» ըմբռնումների հետ:

Բանաստեղծի անձին և անհատականության առկայությունը հաստատվում է այն իրողությամբ, որ գրեթե բոլոր զլուխներում, հատկապես զլուխների սկզբնամասում և ավարտին, ան անդրադառնում է իր ստեղծագործական աշխատանքի հետ առնչվող զանազան խնդիրների՝ Մատյանի գրության, բնույթի, ստեղծման նպատակի, զնահատման, այս ու այն զլխում կամ հատվածում արտահայտված տրամադրության, Աստծու օժանդակությամբ գիրքը հաջողությամբ ավարտելու և իր գրքով անմեռ մնալու բաղդանքների և այլ հանգամանքների հիշատակմանը: Այսպես, Ձեւ բանի սկսվածքում Նարեկացին այն միտքն է հայտնում, թե քանի որ ողբերգության իր մատյանի շարադրանքն արդեն հասնում է ավարտին, ուրեմն «ինքնանախատ» կշտամբանքների հետ թող Տիրոջ բարեգությամքը իսպառ չքանան նաև իր չար սովորությունները:

Մի ուրիշ զլխում, դատապարտելով սեփական մնացերը, բանաստեղծը դիմում է Աստծում՝ ասելով.

*Դիւրիճք են քեզ զսոսին եղծանել,
Քան ինձ տաժանաւորս Աշով նկարել,
Վասն այնորիկ գրեցի առանց խնայելոյ,
Զի Դու առատապէս շնչեսցես, Օրինեա՛:*

(ԻՂ, 55-58)

Ի դեմք քնարական հերոսի՝ մենք հաճախ տեսնում ենք ոչ թե սոսկ ընդհանրական, վերացարկված մարդուն, այլ մտավորական վանականին, որն իր գրքում արտակարգ հաճախականությամբ Հին ու Նոր Կտակարանների թերևս բոլոր գրքերից վկայակոչումներ է անում կամ ակնարկում այդ գրքերի մեջ տեղ գտած ինչ-ինչ մտքեր, ասույթներ և այլն: Ի՞Զ զլխում Նարեկացին նախապես հայտարարում է տվյալ հատվածը ժողովրդական ողբասացների նմանությամբ հանգավոր հորինելու, իև զլխում որոշ տողերի սկզբին ու ավարտին միևնուն «մեղայ» բառը կանոնավորապես գործածելու մասին: Բանաստեղծը բազմիցս շեշտում է նաև իր Մատյանի անմահության գաղափարը (ԾԴ, 73-81; ԿԶ, 1-34 և այլն): Մի ուրիշ տեղ նա այն միտքն է հայտնում, թե իր գիրքը մի հավիտենական արձան է, որը պիտի խոսի Աստծու հրեշտակների բնանով և պիտի իր փոխարեն իր իսկ ձայնով անվերջ աղաղակի (ԶՂ, 9-12, 17, 44): Խճճին հասկանալի է, որ այս օրինակները ոչ մի առնչություն չունեն «վերացարկուած մարդկային էութիւն» հասկացության հետ և միմիայն Նարեկացու անձնավորությանը վերաբերող փաստեր են:

Ավելին՝ Մատյանի ՀԲ զլխում Նարեկացին արձանագրում է զուտ անձնական, զուտ ինքնակենսագրական բնույթի իրողություններ, որ դարձալ չեն համատեղվում «ընդհանրական անհատ» ըմբռնման հետ. ուսուցիչ լինելը (Պետ Վարժից կոչեցալ – ՀԲ, 62), վարդապետական աստիճանը (Ուարքի, ուարքի անուանեցայ – 63), սրբակյաց վարքի տեր վանականի համբավ ունենալը (Սուրբ Վկալեցայ ի մարդկանէ - 66), իր հունակերտ Գրիգոր անվան արթուն և հսկող նշանակությունները.

Յաւազամէ կոչեցայ Արդուն
Եւ ի քոն մահու Անջեցի,
Ի փրկութեամմ առող Հսկող յորշորչեցայ,
Բայց զգաստութեամմ աչս կափուցի:

(71-74)

Վերիշենք, որ հեղինակային Հսկող անունն առկա է նաև ստեղծագործության 95 գլուխմերից 92-ի նույն ձևակերպմամբ աչքի ընկառող վերնագրերի մեջ. «Վերստին յանելուած... նորից Հսկողի», որի կապակցությամբ Մ. Աբեղյանը նկատում է, որ Նարեկացին «ինքն իրեն հսկող է կոչում նաև Ողբերգության ամեն մի բանի վերնագրի մեջ»³:

Կարելի էր Մատյանից բերել Նարեկացու կյանքին վերաբերող այլ տվյալներ ևս, օրինակ՝ ԶԼ գլխի 47-րդ՝ «Եւ եթէ հասից յամս ծերութեան» տողը, որ ինմք է ծառայել Մատյանի գիտական բնագրի կազմողներին եզրակացնելու, թե «Նարեկացին իր երկը և հատկապես այս գլուխը գրելիս դեռ ծեր չէր»: Ի դեպ՝ այստեղ վկայակոչվում է նաև նույն տողի մասին միշտադարյան մեկնչչի կարծիքը. «Զի ծեր չէր, յորժամ ասէր զայս և աղօթէր վասն հասանել ծերութեան»⁴:

Այսուհետք, ելենով այն փաստերից, որ տեղ են գտնել Մատյանի տարբեր գլուխմերում (Գ, 47-82; ԻԸ, 52-53; ԾԲ, 54-59; ՀԲ, 19-25 և այլն), պետք է ընդունել, որ Նարեկացին իր գրքով միաժամանակ հանդես է գալիս որպես ամեն դասի, սեղի ու հասակի մարդկանց մեղքերը, չար գրծերը, մոլորություններն ու հոգեկործան արարքները մարմնավորողի դերում, իրեն համարում է մարդկային բազմատեսակ մեղքերի կրող, հետևաբար նաև՝ ողջ քրիստոնյա մարդկության ներկայացուցիչ:

Ումիմ զամնայն երկրի
Եւ եմ պատգամատոր աղօթանուէր ամենայն աշխարհի:
(ԻԸ, 52-53)

Արդ, ես՝ ճշմարիտ պատկեր ամենայն երկրի,
Չիմս խառնալ ընդ նոցին պարտիս
Եւ ի նոցայցն զան իս դառնութիւն կրկին առաւելեալ,
Նոքոք հեծեծեցից...:

(Ծ, 54-57)

Ես եմ ամենայն եւ յիս ամեննեցուան:

(ՀԲ, 57)

Անդրադառնալով Մատյանի մեջ առկա անհատականի և ընդհանրականի այս միասնության իրողությանը՝ «Գրիգոր Նարեկացի» դիմանելարային հոդվածում Ա. Չոպանյանը գրել է. «Ծայրէ ծայր, այդ գիրքը երգն է միակ հոգիի մը, անոր ցաւերուն, զմայլանքներուն, դողերուն, բոլոր հուզումներուն: Եւ ինչ որ երգը կը լայնցնէ, մեծ արուեստի այն էական

³ Մամուկ Աբեղյան, Երկեր, հատ. Գ, Երևան, 1968, էջ 578:

⁴ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, էջ 1106:

յատկանիշն է որով գործը ընդհանուր և մասմատը է միանգամայն, մարդկային և միանգամայն անհատական. կը զգանք որ իր կրայ խօսած ատեն, բանատեղը ամբողջ մարդկութեան հոգին իր մէջ խտացած կը տեսմէ. ինքզինքը իմկած զգացող այդ էակը որ բարձունքներուն աչքը յառած գթություն կ'աղաչէ, այդ էակը ամբողջ մարդկային ազգն է»⁵:

Ընդհանրացման այս հատկությունն, իրարկե, բացարձակապես պայմանավորված է քնարական սեղի բնույթով, որովին անձնական, անհատական մնեց տենչաճների, վերու ու վեճ ձգուումների, ազնիվ տառապանքների երգը սովորաբար ստեղծվում է մարդկանց համար, հրանց սրտերում համապատասխան արձագանք առաջ բերելու զգացողությամբ:

Հարց է ծագում՝ զաղափարական ի՞նչ հիմունքով է Նարեկացու ստեղծագործության մեջ իրականացվել անձնականի և ընդհանրականի, անհատականի և հանընդհանուրի այս համատեղումը: Արդյոք դա գեղարվեստական ընդհանրացման հասնելու ուղղությամբ հետինակի դավանած տեսական հայացքի արտահայտությունն է, որ նա փորձել է ներկայացնել նաև բաց հայտարարությամբ: Հարցադրումը մինչև օրս դուրս է եղել Նարեկացու մեկնարանների տեսադաշտից:

Ասենք, որ Նարեկացու գրչի տակ անհատականի և ընդհանրականի համատեղումը կապ չունի հրա գրական հայացքների հետ և բացառապես հրա քրիստոնեական աշխարհայնողության արտահայտություն է: Խնդիրն այն է, որ Նարեկացու ընկալմամբ՝ քրիստոնյան եթե մարդկության նախահոր սխալն իր անձին չի վերագրում և բոլոր մարդկանց հանցանքները իրենը չի համարում, կորցնում է իր արդարությունը.

*Որ ըզսիսալն Աղամայ անձին իւրում ոչ գրեսցէ
Եւ ըզմենս ամենից ինքնան ոչ համարեսցի,
... Կորոյս զիւրն արդարութիւն:*

(Ծ, 21-22, 24)

Նույն միտքը, փոքր-ինչ այլ ձևակերպումով, արտահայտվել է նաև մի ուրիշ գլխում.

*...Միրողն Աստուծոյ ի բոլոր սրտէ
Զյանցմունս նախնեացն իր վարկանիցի,
Թէ՛ Մեղաք մեք ընդ հարս մեր, անօրինեցաք և յանցեաք:
(ԿԱ, 31-33, տե՛ս նաև ՀԲ, 19-25)*

Այսինքն՝ Աստվածաներն ամբողջ սրտով նախների հանցանքներն իրենն է համարում, թե՝ «Մենք մեղանցնեցինք մեր հայերի հետ, անօրինեցանք և հանցանք գործեցինք»:

Իսկ Նարեկացին ճշմարիտ աստվածաներ է և հենց այդ պատճառով էլ բոլորի՝ և՛ մեռածների, և՛ ողերի հանցանքներն իրենն է համարում և իրեն կոչում ամենքի «աղոթանկեր պատգամավորը»՝ ընդհանուրի մեջ տեսնելով նաև իր անձը: Նշանակում է՝ բանաստեղծը մարդկության մեղերի կրող է դառնում ոչ թե վերուստ իրեն շնորհված բանաս-

⁵ Արշակ Չոպանեան, Դեմքեր, Փարիզ, 1924, էջ 10-11:

տեղծական կոչումով, այլ քրիստոնյայի իր վարքով ու հավատով։ Այս մոտեցման թեկադրանքով է, որ Մատյանի մեջ միավորվում են անձնական և ընդհանուրական մտահոգությունները։ Ելակես ունենալով սեփական հոգու փրկության համար իր ապրած խոռվքն ու բաղձանքները՝ բանաստեղծը, սերունդներին օգտակար լինելու նպատակով, դրանք հաճանում է թղթին, որպեսզի նրանք նույնպես կարդան իր տողերը, առանց լոկու, իր իսկ բառերով պահատն Աստծուն, խոստովանեն մեղքերը և այդ կերպ առնեն իր մատյանի մաղթանքների սպեղանին։ Նարեկացին այդուղի է տեսնում նաև իր հավերժությունը։

*Առո, որ ոք եւ առցէ զայս դեղ մաղթանաց
Այսր մատնենի պարկեշտականի՝ պաղատիլ սովաւ...
Եղէց եւ ես իմովս բանի կցորդեալ Ամա...
Իսկ ինձ եղիցի պատզամս այս բանի
Արձան փորագրեալ՝ ամենային անեղծանելի,
Որ փոխանակ իմոյ եղկեղոյս անձին մահացուի՝
Անդադար հնչմամբ հեծութեամ լալոյ
Առանց լոկոյ միշտ աղաղակէ։*

(ԿԶ, 1-2, 4, 25-29)

Մատյանում ամենուր տեսնում ենք բանաստեղծներ։ Նա մի վիթխարի, ընդգծված մեծություն է, ուստի ստեղծագործելիս ոչ թե ստանձնում է այլոց ձայնափողը հնչեցնողի պարտականություն, այլ ընթերցողին ներկայացնում է իր անհատականության, իր հոգու խոռվքը՝ առանձնացնելով և պատկերելով այն հովզերը, մտորումներն ու տենչանքները, որոնք իր ըմբռնմամբ, իր ընկալմամբ ընդհանրական են նաև այլ քրիստոնյաների համար։ Ուրեմն Նարեկացու և նրա քնարական հերոսի միջն չկա նկարագրի շեղում։ Մատյանի քնարական հերոսն ինքը բանաստեղծն է։ Եվ իրավացի է Ա. Ղազինյանն այն դեպքերում, երբ հնարավոր է համարում որոշ նույնականություն տեսնել բանաստեղծի անձնավորության և Մատյանի քնարական հերոսի միջն, միաժամանակ անընդունելի են նրանց՝ միմյանցից տարանցաւելու փորձերը։

Նարեկի քնարական հերոսը համակված է հանցապարտության զգացողությամբ։ Նա ճշմարիտ քրիստոնյայի խոնարհությամբ համոզված է, որ իրենցից ավելի մեղավոր, ավելի չարագործ մարդ չկա աշխարհում։

*Ո՛չ ոք մեղատր իբրեւ զիս,
Ո՛չ ոք ամօրէմ, ո՛չ ոք ամբարիշտ,
Ո՛չ ոք ամիրա, ո՛չ ոք չարագործ,
... Ես միայն, եւ այլ ո՛չ ոք։*

(ՀԲ, 50-52, 56)

Նարեկացու հերոսն Աստծու առաջ բաց է անում իր սիրտը, խոստովանում իր բազմաթիվ, անհամար մեղքերը, թողություն հայցում։

Իսկ մեղանք իմոց յանցանաց՝ անթիւք,
Չորս անհնար է առնոլ ի միտ:

(Ղ, 39-40)

Բայց Մատոյանի մեջ թվարկված մեղքերը (Ե, 46-90; Զ, 25-40, 104-124; Է, 22-85 և այլն) ավելի երևակայական հայտարարություններ են, քան իրական հանցանքներ: Ծառ դեպքերում այդ թվարկումները ոչ միայն զուրկ են առարկայականությունից, այլև ակներևաբար որպես յուրահիտատուկ հարաստություններ աղերսվում են աստվածաշնչական այլնայլ գործերից հայտնի արտահայտությունների հետ (Հնգամատյան, Թագավորաց գրքեր, Մարգարենություններ, Ավետարաններ և այլն): Այնպես որ՝ Մատոյանի մեջ մեղավորության գիտակցությունը կամ մեղքի գաղափարը մշտապես առկա է, իսկ բուն հանցակազմը՝ բացակա:

Նարեկացու հերոսի համոզմամբ՝ առիսասարակ մարդն ի ծնն մեղավոր է, թաթախմած է բարոյական պես-պես ախտերի մեջ, տարված է ստոր կրքերով ու նանիր գործերով: Ոչ մի մարդ չի կարող Աստծու առաջ պարծենալ, թե ինքն արդար է ու երբեք չի ճաշակել աշխարհի մահացու հաճուքները.

Մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ,

Եւ Ո՛չ ոք է արդարն և ո՛չ մի...

Թէ՛ Ո՛չ երբէք շնացայ, ո՛չ պոռնկեցայ

Եւ ո՛չ զաշխարհին ինչ համրուրեցի ճաշակս մահու:

(ՀԲ, 11-12, 29-30)

Ստեղծագործության տարբեր գլուխմերում շոշափվում է մարդու մաքրագործման, արատավոր ախտերից, մեղքի ապականությունից թողություն ստանալու խնդիրը, որ հնարավոր է իրականացնել միայն անկեղծ խոստովանությամբ, ապաշխարանքով ու մարդաներ Աստծու բարեգութ օժանդակությամբ:

Յուսա՛յԱստուած, խոստովան լե՛ր, եւ նա հոգայ վասն քո:

(ԽԴ, 42)

Աստված ամենակարող, անհիշաշար և ողորմած այն էությունն է, որ խորհրդանշում է բարության ու կատարելության մասին մարդկային բարձրագույն իդեալը: Աստված փըրկությունն է պարզեւում մարդուն, մեղքի մրրիկը դարձնում քավության զեփյուտ, բարկության հուրը փոխում անձրնի (ԿԳ, 6-8):

Մատոյանի բովանդակությունն սկսվում և զարգանում է քնարական հերոսի տարաբնութ ապրումների՝ մեղքի զգացողության, անկեղծ զղոսմի, կորստյան սարսափի, տառապազին հեծեծանքների, փրկության հովանի և դառն հիապափության փոխներին ծավալումներով: Մատոյանի մեջ արծարծվող տարբեր խնդիրներն ու զգացմունքները սերտողնեն կապակցված են միջանց: Նկարագրված յուրաքանչյուր հոգեվիճակ յուրովի առնչ-

վում է նախորդին և միաժամանակ նախապատրաստում հաջորդի բնույթը: Օրինակ՝ ԺԲ քանի սկզբի հատվածում բանասեղծն արտահայտում է այն միտքը, թե քանի որ նա-խորդ գլուխմերում ինքն արդեն հոսահասության խոսքերով մերժել է իր անձը և տարա-կուսանքների հեծանով մահու չափ ծաղկել իրեն, ուստի այժմ, վերադառնալով փրկության հովանու, համարձակվում է Սուրբ Երրորդությանը կանչել օգնույթյան (ԺԲ, 1-5):

Մատյանում մարդու փրկության գաղափարը ի վերջո հանգում է Աստծու հետ միա-վորվելու միատիկական գաղափարին: Քնարական հերոսը վստահ է, որ մաքրագործման ճանապարհով և մարդասեր Արարշի գթությամբ ինքը կկարողանա ազատվել երկրային հանցանքներից, մահվանից հետո՝ հարության օրը, մերձենալով Աստծուն, կմիախառնվի նրա էռույանը և այդ կերպ կհասանի անմահության.

Եւ զոր ահատրն է ասել, կարգեմ ասուանօր,
Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց,
Ասսուած իսկ լինել ընտրութեամբ շնորհի՛ն
Եւ ընդ հաստողիդ միահապ...:

(ԺԲ, 53-56)

Նաև՝

Զի ամենայնի մահացեալ հոգիս մարմնովս մեղաց
Ծնորհօք Թո, գթա՛ծ, ի Քեզ զօրացեալ՝ Թե՛ նորոգեցայց,
Զատել ի մեղաց ամմահ կենդամութեամբ
Ի յարութեամն արդարոց, Հօր քում օրինեցեալ:

(ՂԵ, 44-47)

Բայց այն գիտակցությունը, թե աստվածանալու ձգուումը հակադիր կամ անհամատե-ղելի է մշտապես մեղքեր գործող մարդկային բնույթյանը, քնարական հերոսի հոգում ա-ռաջ է բնորում վհատություն և պատճառ դառնում խոր ողբերգության.

Ի բարեպաշտես իմում գայթակղիմ,
Մինչդեռ աղօթեսն՝ եւ վրիսիմ...
Յարդարանալու իմ՝ եւ մեղամշես...
Ծաղկիմ, եւ ո՛չ պտղաբերիմ,
Ասեմ, եւ ո՛չ առմես,
Խոստանամ, եւ ո՛չ կատարեմ...
Մտնեմ ի բոյն աղամի, եւ անդուստ ազու եղանեմ,
Մաքրիմ, եւ այլ մրճոտիմ,
Լուամիմ, եւ նովին զարանամ:

(ՀԱ, 34-37, 45-47, 73-78)

Նարեկի քնարական հերոսի ողբերգությունը պայմանավորված է մարդու երկփեղկված էությամբ. մարդն իր բնությամբ ու գործով լույսի և ստվերի շաղախն է: Նա մի կողմից համակված է հոգու փրկությանը համեմու, մեղքերից մաքրագործվելու բուն և անկեղծ ձգտումով, մյուս կողմից՝ ունի սեփական էության շարունակական մեղսագործության գիտակցությունը: Այս երկու կողմերը նրա հոգեկան աշխարհում ներկայացնում են անլուծելի ներհակություն: Տվյալ ներհակությունն իր ողջ ողբերգականությամբ ժամանակին դիպուկ նկատել է մեծանուն գրող Լևոն Շահնշահ և տվել հետևյալ պատկերավոր ձևակերպումը. «Նարեկ» մարդկային հոգիի մը խորումկ ալեկոծումն է, փոթորիկի բերանն ինկած քրիստոնեայ հոգիի մը, որ ծովերու ջրերուն պէս շարունակ դէպի վեր, դէպի երկինք կը ձգտի և ծովերու ջրերուն պէս շարունակ վար կը թափի իր խեղճ գոզը»⁶:

Փորձենք ընդհանրացնել ասվածը.

ա. Նարեկացու Մատյանում առաջին դեմքով հանդես եկող անձնավորությունն ինքը բանաստեղծն է,

բ. Որպես ստեղծագործության քնարական հերոս՝ Նարեկացին սեփական մտորումների, հոգեկան տագնապների ու տենչանքների, մեղքերի խոստովանության գեղարվեստական վերարտադրման միջոցով արձագանքում է հանուր մարդկությանը հուզող խնդիրների՝ ունենալով քրիստոնեական այն հայացքը, թե ամեն մի ճշմարիտ աստվածաներ պետք է բոլոր մարդկանց գործած մեղքերը իրենը համարի,

գ. Հանցապարտության զգացողությամբ տառապող քնարական հերոսը վստահ է, որ անկեղծ խոստովանությամբ, հոգերով զղանքով և մարդասեր Աստծու գթությամբ հնարավոր է մաքրվել երկրային մեղքերից և հարության օրը, միախառնվելով աստվածային էությանը, հասնել անմահության: Բայց այս հույսն ամեն անգամ վերածվում է ցավազին ողբերգության այն գիտակցությունից, թե շարունակաբար մեղքեր գործող մարդկային բնության պատճառով վերջնական մաքրագործումը դառնում է անիրականալի:

⁶ «Լևոն Շահնշահ երկերը», 9-րդ հատոր, Պեյրութ, 1946, էջ 113: